

նակին զինուորական ըմբոստությունը նա-
եւ կայսեր համար մշտնջենաւոր վտանգ
մը ստեղծած էր: Բնական հետեւանք էր որ
քաղաքացի տարրը չկարենար հանդուր-
ժել որ զինուորները տէր եւ տիրական
դառնային կայսրութեան ճակատագրին:
Անոնց ջանքը եղաւ տկարացնել բանակին
ազդեցութիւնը եւ ձեռք անցընել միապե-
տական քաղաքականութիւն մը: Քաղա-
քացիներու եւ զինուորներու միջեւ ծա-
ղած թշնամութիւնը եւ ընդդիմութիւնը
մայրաքաղաքին դէմ՝ պատճառ կ'ըլլայ
որ բանակը քալէ մայրաքաղաքին վրայ,
բռնի ոյժով տապալէ ծերունի կայսրը, որ
համարձակէր էր իրենցմէ դրամական դո-
հողութիւն պահանջել:

Ապստամբութեան առաջնորդ կանգնած
էին երկու յոյն իշխաններ, Կոմիանոս,
ծանօթ Իսահակ Կոմնենոս անունով, որ
թաղաւորական աթոռին վրայ աչք տըն-
կած էր, եւ Կոմինաս⁵³: Ապստամբները ի-
րենց տիրապետութեան տակ առին արեւ-
ելեան նահանգները, որոնց բնակիչներէն
սկսան կազմել պատերազմական մեծ
խումբեր. իսկ Միքայէլ Ե. որ չէր ուզեր
սպառնալիքի տակ դահէն հրաժարիլ, ի-
րեն հետ ունէր արեւմտեան նահանգնե-
րը⁵⁴:

Այսպէս, 1057 թուին, յունական աշ-
խարհը երկու մասի բաժնուած՝ քաղաքա-
կան պատերազմով իրարու դէմ կը բա-
խէին, զոհելով երկուստեք բազմաթիւ
կեանքեր:

Երբ մէկ կողմէ քաղաքական պատերազ-
մը տակնուվրայ կ'ընէր յունական աշ-
խարհը, միւս կողմէ Բիւզանդիոնը դար-
ձած էր կրօնական չփոթութիւններու
թատր մը: Շփոթութեան զլուխ կանգնած
էր հռչակաւոր Միքայէլ Կերուլարիոս
Պատրիարքը, որուն վիճակէր էր տխուր
բախտը՝ յունական եկեղեցին տիեզերա-
կան եկեղեցիէն բաժնելու: Սաստիկ ա-
տելութեամբ վառուած Լատիններու դէմ,
այս անգամ ալ զինուեցաւ անոնց ծէսին
դէմ, մանաւանդ բաղարջ հացով պատա-
րազելու սաստիկ արգելք դրաւ: Կ. Պոլ-
սոյ մէջ գտնուած լատինական ազդերուն
բոլոր եկեղեցիները փակել տուաւ, եւ նը-
ղովք կարգաց անոնց վրայ՝ որոնք բա-
ղարջով կը պատարագէն կամ կը հաղոր-
դուին: Ան կը պահանջէր որ լատին եւ
ուրիշ եկեղեցիները ընդունին յունական
տեսակէտը, եւ ոչ թէ լատիններունը:
Յոյները ինչպէս հայոց հետ, այսպէս ա-
մէն եկեղեցիի հետ անհաշտ էին եւ ար-
համարհանքով կը վարուէին: Թէեւ Մո-
նոմախոս կայսրը Լեւոն Թ. Ս. Պապին
հետ միացած՝ ուղեց երկպառակութիւնը
մէջտեղէն վերցնել, եւ վերստին երկու ե-
կեղեցիները իրարու միացնել, ինչպէս էր
հազար տարիներէ ի վեր, սակայն Պա-
տրիարքին խստութեան պատճառով ամէն
ջանք ապարդիւն անցաւ: Միքայէլ Ե. ի օ-
րով Կերուլարիոս Պատրիարքը պատիւնե-
րէ վար առնուեցաւ⁵⁵:

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ
(Շարունակելի)

53 Հմմտ. Ա. Լաստ. Պատմ. Գլ. ԺԸ էջ 80:
54 Հմմտ. Մ. Ուռհ. Պատմ. Բ. էջ 147:

55 Հմմտ. Բարոնիոս, Տեա Զամչեան, Պատմ. Բ.
էջ 961-962:

ՈՒԼԱՇ ԵՒ ԻՐ ՀԱՅ ԱԳԱՐԱԿԱՏԵՐԸ

Ա.

ՈՒԼԱՇ ԳԻՒԴԸ

ՈՒԼԱՇ զիւղը կը գտնուի Սերաստիա-
յէն շուրջ վեց ու կէս ժամ կամ 18 մղոն
հարաւ-արեւմուտք: Այժմ Սըվասի կե-
դրոնական դաղային զիւղերէն մէկն է եւ
պաշտօնական անունն է Ուլաշ Բէոյիւ:
Հ. Ն. Սարգիսեան, որ 1843-1853 տարի-
ներուն Փոքր Ասիա շրջած է, Ուլաշը կը
թուէ Սերաստիոյ զիւղերուն մէջ¹, սա-
կայն ո'չ Սիմէոն Երեւանցի (Ջամբո), ոչ
Պօղոս Վարդ. Նաթանեան (Տեղեկա-
գիր...) եւ ո'չ ալ Գարեգին Եպս. Սըր-
ուանձտեանց (Թորոս Աղբար) Ուլաշը յի-
շատակած են Սերաստիոյ առաջնորդական
վիճակին զիւղերուն մէջ: Կ. Պոլսոյ Աղ-
դային Հիւանդանոցին 1904-ի Բնդարձակ
Տարեցոյցին մէջ ալ զիւղը յիշուած չէ ոչ
մէկ առաջնորդական թեմի մէջ, թէեւ ա-
մենայն հաւանականութեամբ կը վերաբե-
րէր Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռին:
Գիւղը հաստատուած է գաշտավայրի
մը մէջ եւ լիճի մը մօտ, 4770 ոտք բար-

ձրութեան վրայ²: Հողը շատ արգասաբեր
էր, եւ ցորենը մէկի փոխարէն 10-12 բերք
կու տար: Ինչպէս Սերաստիոյ Դղմաճ
զիւղը, Ուլաշն ալ կ'արտադրէր ծերուն
կոչուած ընտրելագոյն ցորենը: Այս եր-
կու զիւղերէն է որ Սերաստիա կու դար
ճերմակ ալիւրը: Գոմէշի կաթէն պա-
տրաստուած սերը եւ մածուկը ընտիր էին:
Դաշտին մէջ կը գտնուէր փոս մը, ուր
ձմեռը մէկ կամ երկու ոտք ջուր կը հա-
ւաքուէր, բայց ամառը կը ցամքէր: Ու-
լաշ հայկական հարուստ զիւղ մըն էր³:

Գիւղին մօտ կը գտնուի Թեճիւր անտա-
ռապատ լեռը, որուն ստորոտը կը բնա-
կէին Գոչքիւրի եւ Չաղա Գիւրտեր: Քուր-
մաճի լեռը հարաւէն կը փակէ գաշտա-
վայրը⁴:

Կարապետ Գարեգեան «Ուլաշ եւ շրջա-

1 Köylerimiz, p. 741. - Ուլաշ անուն զիւղեր
կան Անգարայի Քեսքին, Մուղլայի Միլաս,
Սամսունի Չարչամպա, Տիարպաքրի Օսմանիյէ
գաղաներուն մէջ: Կան նաեւ երկու Ուլաշ-
լար, մէկը Պոլսի Կերեմէ եւ միւսը Քէօթա-
հայի Էմեթ գաղային մէջ, եւ Ուլաշ պալա
եւ Ուլաշ զիր Գոճաէլիի Գարամուրաթ գաղա-
յին մէջ: (Անդ, էջ 741-742):

2 Տեղագրութիւնք Ի Փոքր եւ Ի Մեծ Հայս.
1864, էջ 65:

3 Wilson, Handbook for Travellers in Asia
Minor, etc. 1895, p. 260.

4 Idem, ibid.

5 Ինճիճեան, Ասիա, Ա, էջ 367, Բարունակ պէյ
Ֆէրուհիան, Ուղեւորութիւն Ի Բաբելոն ընդ
Հայաստան. 1878, էջ 35: H. H. von der
Osten, Explorations in Hittite Asia Mi-
nor, 1927-1928 (The University of Chicago
Press), p. 63; James Brant, « Journey
through a part of Armenia and Asia Mi-
nor in the Year 1835 ». (JRGS, VI (1836)
mp. 214.

6 H. H. von den Osten, ibid. Photo: p. 64.
Բիւզանդական եւ մահմեդական չիրիմներու
նմանութեան մասին՝ Tout le monde fut
frappé de la ressemblance que les tombes

կայքը» վերնագրին տակ, առանց ուրիշ տեղեկութեան, կը յիշէ Լե-Խաչ (Ուխտ), - Լուսադիւր, - Ս. Էրանոս, - Չաքալ աղբուր, - Սեւ քար, - Չաղաղան, - Հիւ- յիւկ (Հայեկ)⁷, - Սեւ Բլուր, - Թէմէր (չեռ 2000 մ.), - Խուլ քար, - Սէրչի խան, - Նահատակի քար⁸:

Ուլաչի հայերը առհասարակ քաջա- կազմ, կաջմբուն են գեղեցիկ էին: Սե- բաստիոյ հայ երիտասարդները Ուլաչի գեղադէմ, հրապուրիչ եւ համարձակ հա- յուհիներուն համար մեծ հիացում կ'ար- տայայտէին⁹: Սեբաստացիները գուցէ չա- րամտորէն կ'աւելցնեն թէ Ուլաչի կիներ- րը դժուարամտոյց էին:

Սեբաստիոյ բոլոր գիւղերուն մէջ մի- այն Ուլաչիները գութան կը դործածէին: Թեմէրի լեռներուն մէջ ունէին պարարտ, ջրաբեր արօտավայրեր, ուր պարարակ ոչխարներու բազմաթիւ հօտեր կ'արա- ծէին: Ունէին 100 գլուխ գութան, որոնց կը լծէին հուժկու գոմէշներ: Դրացի Թուրքերը, մասնաւորաբար Գարափա- փախները, կը ջանային գիւղին հողերուն վրայ ոտնձգութիւն ընել, բայց Ուլաչի հայերը դիւրաւ տեղի չէին տար¹⁰:

Ուլաչի հնագոյն հայկական յիշատա- կութիւնը կը թուի դառնալ Գրիգոր Կա- մախեցիի (Դարանագի) ժամանակա- գրութեան մէկ տարբերակին վրայ կա- տարուած յաւելումի մը մէջ, ուր կ'ըս- տի.

Ի քվին Ռիֆ (1614) ի գիւղաքաղաքն ի յուլաչ սուրբ փրկիչ Եկեղեցին շինեալ¹¹:

chrétiennes des cimetières byzantins de Khalasa, Reheiba, Sabaite, etc. pré- sentent avec les tombes musulmanes de nos jours. Sur beaucoup de ces vieilles tombes on voit encore dressées à la tête et aux pieds du défunt les deux stèles caractéristiques des cimetières musul- mans. - P. Savignac, «La Région d'ain Qedeis» (Revue Biblique, XXXI (1922), p. 74.

7 Հիւյիւք աղաւաղումը չէ հայեկին, այլ յոր- ջորջումն է այն հողաբլուրներուն, որոնց տակ

1652ին խուլասար դրիչ Աւետարան մը կ'ընդօրինակէ «ընդ Խովանեալ Ս. Աստ- ուածածին» եւ կը յանձնէ Ուլաչ գիւղին տէր Տիրատուր քահանային¹²: Յայտնի չէ թէ Ս. Աստուածածին եկեղեցին Սեբաս- տիոյ կամ ուրիշ քաղաքի մը համանուն եկեղեցի¹³ է, թէ Ուլաչի եկեղեցին: Վեր- ջին պարագային, 1614ին կառուցուած Ս. Փրկիչ եկեղեցին՝ 30-40 տարի ետք վե- րակառուցուած պէտք է ենթադրել, տա- րբեր անունով մը: Ուլաչի եկեղեցիին ա- նունը ուրիշ տեղ յիշուած ըլլալ չի թը- ւիր:

Կարապետ Գաբրիէան կը գրէ թէ գիւ- ղին ձեռագիրներէն մէկուն մէջ ժամանա- կին կարգացած է թէ բնակիչները Կարսէն դաղթած էին, եւ կը կարծէ յիշել թէ Կար- սի Գաղիկ Աբասեանին հետ է որ Փոքր Ասիա հաստատուած էին¹³ (ԺԱ. դարու կէսերուն): Նկատի առնելով մարդկային յիշողութեան վերաբերմանը եւ որքան ա- տեն որ յիշուած ձեռագիրը երեւան չէ ե- լած, Կ. Գաբրիէանի տեղեկութիւնը վե- րապահութեամբ պէտք է ընդունել: Այ- սու հանդերձ, Ուլաչիները կրնան պա- հած ըլլալ ԺԱ. դարէն ետք իսկ Կարսէն կատարուած դաղթի մը յիշատակը, եւ զայն կապած ըլլալ Գաղիկ Աբասեանի տե- ղափոխութեան հետ:

Եվլիա Չելեպի (ԺԷ. դար), Մանճըլը- քէն դէպի հիւսիս ուղեւորելու ատեն, հանդիպած է Ուլաչ, ուր կը նստէր «Թիւրքման աղաքը» (Թիւրքմեններուն պետը), որ Քոչումի Թիւրքմեններէն կը

աւերակներ ծածկուած են:

8 Բագմիք Սեբաստիայ Գաւառաքարառին. 1952, էջ 672:

9 Կ. Գաբրիէան, Եղեղնապատում. 1924, էջ 107. եւ Ս. Ծոցիկեան, Արեւմտահայ Աշխարհ, 1947, էջ 151:

10 Կ. Գաբրիէան, Եղեղնապատում, էջ 107:

11 Վ. Ա. Յակոբեան, Մանր ժամանակագրու- թիւներ, 2, էջ 271, տող 24-25:

12 Հ. Բ. Սարգիսեան, Յուցակ... վեցերորդ, էջ 738-739:

13 Կ. Գաբրիէան, Եղեղնապատում, էջ 107:

դանձէր ամառնային արօտավայրի (Խայ- լաք) տուրքը: Գիւղը ունէր գատը մը (որ քէ՛ դատական եւ քէ՛ քաղաքային պաշ- տօնատար մըն էր), 500 տուն մահմետա- կան եւ հայ բնակիչ: Մեմի քեթիլտային մղկիթը Սիւլեյման Գանունի (1520-1560) հրամանով Սինան ճարտարապետը շինած էր¹⁴: Մղկիթը ունէր հասութարեր տուն մը եւ քանի մը խանութ¹⁵:

Հ. Ղուկաս Ինճիճեան, ԺԸ. դարուն վերջերը կամ ԺԹ. դարուն սկիզբը հաւա- քած տեղեկութեանց հիման վրայ՝ կը հա- լաստէ թէ գիւղին բնակիչները «առ հա- սարակ յազգէն Հայոց» էին¹⁶:

1835ին, James Brant¹⁷ կը վկայէր, թէ գիւղը զուտ հայաբնակ է եւ կը բաղկա- նար 60 ընտանիքէ: Քանի մը տարի ետք, Վեր. George Percy Badger¹⁸, որ 22 Հոկ- տեմբեր 1842ին անցած է գիւղէն, մեծա- մասնութեամբ հողագործ եւ հովիւ «չուրջ 60 ընտանիք» գտած էր հոն: Ըստ առա- ջին ուղեգրին, որ անդրիական հիւղատոս մըն էր, գիւղին ժողովուրդը շատ բարե- կեցիկ ըլլալու երեւոյթը ունէր. բայց եր- կրորդը, բոլորովին տարբեր տեղեկու- թիւն մը կու տայ: «Այս քրիստոնեաներուն հողաչէն հիւղակները, կը գրէ բողոքական միսիոնարը, աղտոտ էին ու բնաւ հան- դրստաւէտ, եւ խեղճ ու ճշշուած ժողո- վուրդն ալ նոյնքան թշուառ երեւոյթ մը ունէր»: Գիւղը ունէր երեք քահանայ եւ փոքր եկեղեցի մը: Գիւղացիները ըսած էին թէ քանի մը օր առաջ, Մուսուլ եր- թալու ատեն, գիւղէն անցած էր ամերի- կացի անկախ միսիոնար մը, որ քանի մը քարոզչական տետրակ ցրուած էր:

Տոքթ. Ֆէրուհիան, որ 1847ին Ուլաչէն անցած է, բայց իր ուղեգրութիւնը 1878ին հրատարակելու ատեն՝ լրացուցած է ու- ղեւորութեանէն ետք ստացած տեղեկու-

թիւներով, 100 տուն Հայ (չուրջ 850 անձ) կը յիշէ գիւղին մէջ¹⁹: Նկատելով որ 1835էն կամ 1842էն մինչեւ 1847 տու- ներուն թիւը 60էն 100ի չէր կրնար բար- ձրանալ, պէտք է ենթադրել թէ Ֆէրուհի- խանի թիւը կը վերաբերէր ԺԹ. դարուն ութսունական թուականներուն:

15 Փետրուար 1886ին Կ. Պոլսոյ պա- տրիարքարանին ուղղուած հանրագրու- թեան մը մէջ, կ'ըսուի թէ «զուտ հայա- բնակ այս գիւղը 150 տունէ աւելի բնակ- չութիւն մը» ունէր. իսկ Կ. Գաբրիէան²⁰ եւ Ս. Ծոցիկեան²¹ փոխադարձաբար 400 տուն (3200 անձ) եւ 2000 անձ ցոյց կու տան հայերուն թիւը Ի. դարուն առաջին քսանամեակին: 1954ին Փարիզաբնակ Սե- բաստացի մը (այժմ հանգուցեալ Վ. Ե- րանոսեան) նոյնպէս 400 կը յայտարարէր հայոց թիւը, թերեւս կրկնելով ինչ որ տեսած էր Գաբրիէանի գիրքին մէջ:

Եթէ ճիշտ համարուի 1915ին 400 տուն հայու գոյութիւնը, կը հետեւի թէ 1835էն մինչեւ 1915, 80 տարուան մէջ, մօտաւո- րապէս եօթնպատկուած, իսկ 1886էն մին- չեւ 1915, 30 տարուան մէջ, աւելի քան կրկնապատկուած էր գիւղին հայ բնակ- չութեան թիւը: Անհաւանական չէ, սա- կայն, որ 400 տունը կամ 2000 անձը չա- փաղանցուած թիւեր ըլլան:

Շատեր կը հաւաստեն թէ գիւղացի հա- յերը միշտ կը հիւրընկալէին թուրք զին- ուորականները որ գիւղէն կ'անցնէին:

Տարագրութիւնը. - Սեբաստիոյ կուսա- կալ Մուամմեր, որ Ուլաչի մէջ մղկիթ մը շինել տուած էր, տարադրութեան ըս- կիզբը հայերուն կ'առաջարկէ խլամանալ եւ անոնք ալ կ'ընդունին: Այդ ատեն Սե- բաստիայէն հոճամը կը զրկէ, որ գիւ- ղացիներուն կ'ըսէ. «Շերին եւ օսմանեան օրէնքները չեն թոյլատրեր բռնի խլա-

14 Սինան իր կառուցած մղկիթներուն մէջ կը յիշէ այս մղկիթն ալ (Tezkeret-ül-bünyan. Istanbul, 1315, p. 30).

15 Seyahatname, III, p. 196.

16 Ասիա, Ա, էջ 367:

17 James Brant, *ibid.*, p. 214.

18 The Nestorians and their Rituals. 1852, I, p. 70.

19 Ուղեւորութիւն, էջ 38:

20 Եղեղնապատում, էջ 599:

21 Արեւմտահայ Աշխարհ, էջ 651:

մացումը: Անոնք որ կամովին խաժմու-
թիւնը կ'ընդունին՝ մղկիթ թող երթան,
խոկ մնացեալները՝ եկեղեցի»: Երբ ոչ ոք
մղկիթ կ'երթայ — այս տեղեկութիւնը կը
հակառակ խաժմութիւնը ընդունելու մա-
սին գիւղացիներուն հաւանութեան — գիւ-
ղը տեղահան կ'ընեն: Արդէն այրերուն
մեծ մասը՝ գիւղապետները եւ բոլոր ա-
ռաջաւորները՝ նախապէս Սերաստիա
տարուած, բանտարկուած եւ, յետոյ,
ջարդուած էին: Ասոնց մէջ էր նաեւ գիւ-
ղին քաջարի քահանան, տէր Վահրամ Գա-
րակեալութեան: Մնացեալ այրերն ալ,
մանուկներն իսկ, գիւղին մէջ եւ ճամբա-
ները կը խողխողուն: Այս գիւղին եւ
Դղմաճի կիներն ալ մինչեւ Միջագետք
տարուած եւ բնաջնջուած են: Հալէպի
մէջ վերապրած միայն չորս Ուլաշի եւ
մէկ Դղմաճի կին կը գտնուէր զինադա-
գարէն ետք: Տարագրութիւնը տեղի ու-
նեցած է 1915ի բացառապէս առատ հունձ-
քը քաղուելէ ետք, Սեպտեմբեր եւ Հոկ-
տեմբեր ամիսներուն²²:

1915ի պատերազմին, Ուլաշ՝ բացի
պարտաւորիչ պատերազմական տուրքէն՝
օսմանեան բանակին նուիրած էր 500 քի-
լէ ցորեն, մեծաքանակ պուլղուր, եւ 2000
ոչխար: Տարագրութենէն ետք, կառա-
վարութիւնը գրաւած է քանի մը տասնեակ
հազար ոչխար, կով եւ գոմէշ²³:

Այսքան են Ուլաշի մասին պատահական
ընթերցումներու ատեն հաւաքուած տե-
ղեկութիւնները: Վերապրող Ուլաշիներ-
ուն կը մնայ լրացնել թերիները եւ ուղ-
ղել սխալները, եթէ կան:

Ուլաղբաւ երեւոյթ մըն է որ Էվլիա
Չելեպիի օրով (ԺԷ. դար) 500 տունէ
բաղկացած գիւղը՝ Ի. դարուն առաջին
կէսին շուրջ 60 տուն բնակիչ միայն ու-
նէր: Ուլաղբաւ է նաեւ թէ մահմետական
տարրը, որ ԺԷ. դարուն իսկ շատ բազմա-
մարդ ըլլալ չի թուիր, դատելով մղկիթին
շատ սահմանափակ եկամուտի աղբիւր-

ներէն, Ի. դարուն գրեթէ բոլորովին ան-
հետացած է, թէեւ ճիշտ չի թուիր զանա-
զան հեղինակներու այն յայտարարութիւ-
նը թէ գիւղը «դուռ հայաբնակ» էր:

Ինչ որ ալ ըլլայ, սակայն, Ուլաշիներ-
ը կը զանազանուին ուրիշ գիւղացիներէ՝
ընդհանրապէս դուրսնի իրենց գործա-
ծութեամբ, եւ հողագործութեան եւ ա-
նասնապահութեան մէջ իրենց մեծ յա-
ռաջդիմութեամբ: Սերաստիաներ կը
հաւաստեն նաեւ թէ Ուլաշիները միշտ
բարեւոյթ յարաբերութիւններ պահած են
կառավարական շրջանակներուն հետ եւ
հեռու մնացած են յեղափոխական գոր-
ծունէութենէ: Այս պարագան հաւանա-
կանաբար կը բացատրուի Գարակեալու-
րեան ընտանիքին վերադրուած դէպքե-
րով:

Բ.

ԳԱՐԱԿԵԱՎՈՒՐԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԸ

ՈՒԼԱՇԻ մէջ կ'ապրէր համբաւաւոր ըն-
տանիք մը, որ կը կոչուէր Գարակեա-
վութեան եւ որուն համբաւը տարածուած
էր մինչեւ շրջակայ քաղաքները:

Հ. Ղուկաս Ինճիճեան, ԺԹ. դարուն
սկիզբը, Ուլաշի մէջ կը յիշէր «տուն՝ ինչ
փարթամ հին եւ անուանի առ ամենեւին
կոչեցեալ Գառակեալութեան, որոյ սեփա-
կան է գրեթէ ամենայն երկիրն Ուլաշու,
եւ ազատ է յամենայն արքունի հարկաց-
դայս ազատութիւն չնորհեաց նմա սուլ-
դան Միւրատ, որոյ յիշեալներն աստէն
հանդերձ զօրովք իւրովք, սա ամենայն
առատութեամբ եւ սիրով կերակրեաց
զամենայն զօրս նորա. եւ այժմ եւս յան-
ցանելն աստի փաշայից՝ սա կերակրէ ըզ-
նոսա»²⁴:

Զարմանալի է որ ո'չ James Brant եւ
ո'չ ալ G. P. Badger այս փարթամ ընտա-

նիքին յիշատակութիւնը չեն ըրած, բայց
աւելի զարմանալի է որ երկրորդը խեղ-
ճութիւն միայն տեսած է գիւղին մէջ:

Գարակեալութեաններու ապահարկու-
թեան պատմութիւնը տարիներու ընթաց-
քին հետզհետէ ճոխացած՝ առասպելական
հանդամանք մը ստացած է:

Անդրէաս Վ. Աղեքսանդրեան կը պատ-
մէ թէ, աւանդութեան մը համաձայն, երբ
սուլթան Մուրատ Դ (1638-1647) Պաղ-
տատի դէմ կ'երթար իր բանակով, ճամ-
բան իջեալն է այս Ուլաշ գիւղը: Գիւ-
ղին մէջ հին անուանի տոհմէ մը սերած
փարթամ հայ մը կար, որ տէր էր Ուլաշի
գրեթէ ամբողջ երկրին, լայն հովիտնե-
րուն եւ ընդարձակ դաշտին: Այս հայը կը
հիւրընկալէ սուլթանը եւ անոր ամբողջ
բանակը, զոր կը կերակրէ առատօրէն:
Այս ծառայութեան փոխարէն՝ սուլթանը
զայն եւ ամբողջ գիւղը հարկազերծ կ'ընէ
արքունի հարկէն եւ մանաւանդ տասա-
նորդէն: Այս ապահարկութիւնը կը պահ-
ուի երկար ատեն, ինչպէս Անդրէաս վար-
դապետին կը պատմէ այդ հայուն տոհ-
մէն մէկը, երբ զինքը եւ իր ընկերները
կը հիւրընկալէ 1835ին: Այդ թուականին
ղեւ ապահարկութիւնը մասամբ ի զօրու
էր:

Քանի մը ուրիշ տեղեկութենէ ետք, ո-
րոնք կը յիշեցնեն Ինճիճեանը, Անդրէաս
վարդապետ կը շարունակէ պատմել թէ
սուլթանը զարմանալով հայուն մեծ հա-
րստութեան վրայ, կը հարցնէ թէ ի՞նչ-
պէս կրցած է այդքան մեծ հարստութեան
պէս կրցած է այդքան մեծ հարստութեան
տէր ըլլալ: Հայը կը պատասխանէ. «Եր-
կու սկզբունքով: Առաջին՝ երեկոյեան
զործը առաւօտուն չձգել: Երկրորդ՝ ոչ
ոքի ձրի հաց կերցնել»: Սուլթանը այն-
քան հաւանք է անոր խօսքին, որ երբ Պաղ-
տատի առջեւ հասեր է, հրամայեց է նոյն
օրն իսկ յարձակում գործել, հակառակ
զօրավարներուն խորհուրդին, յիշելով
հայուն խօսքը: Յարձակումը յաջողու-
թեամբ կը պսակուի: Եթէ սուլթանը նոյն
օրն իսկ յարձակած չըլլար, պարսիկ դա-
հաժառանգը հզօր բանակով մը կը յառա-

ջանար, քաղաք կը մտնէր եւ զայն կը
պաշտպանէր: Յարձակման հետեւանքով,
քաղաքին հրամանատարը հայազգի Պաղ-
թաշ-խան փութացած էր անձնատուր ըլ-
լալ²⁵:

Նոյն պատմութիւնը, աւելի ճոխացած,
պատմած է նաեւ ուսուցիչ եւ մատենագիր
հանգուցեալ Կարապետ Գարիկեան:

«Այս գիւղը, կը գրէ, քիչ մ'ալ սանկ
առանձնաշնորհալ զիրք մը ունէր: Սուլ-
թան Մահմուտ (կարդալ Մուրատ) Պաղ-
տատը գրաւելու զնալուն, Սերաստիոյ
մօտը՝ Կեսարիոյ ճամբուն վրայ՝ Չուլու
(այժմ Կեսարիոյ կեդրոնական գաղաթիւն
մէջ) թուրք գիւղը կ'իջեալնէ... գիւղա-
ցիները տեսնելով որ զօրքին հաց-ջուր
չպիտի կրնան օգտեցնել, գիւղերը զօրքին
իջեալնած տեղը ջուր կը կապեն: Սուլ-
թանը կը ստիպուի մեկնիլ, կը հասկնայ
գիւղացիներուն այս ըրածը, կ'ըսէ. քիւրք
օղլու քիւրք էք, չարուխր ուրբեմուդ
չիլլէ. կէս չարուխ մնաք: Ու երբ Ուլաշ
կու գայ կ'իջեալնէ, գիւղապետը մեծ ըն-
դունելութիւն կ'ընէ. Սուլթանը կը հիւ-
րասիրէ իր տունը եւ ամբողջ բանակը իր
անձնականէն կը կերակրէ. գիւղապետը
կ'երեւայ բաւական թխագոյն, դէմքը՝
դաշտի աշխատութիւններուն մէջ արեւէն
այրած. Սուլթանը փաղաքշարար՝ Գարա-
կեալութեանը բանակէն կը խօսի հետը. մար-
դուն անունը կը մնայ Գարա-կեալութեան,
եւ այս կ'ըլլայ իր դերդաստանին ազգա-
նուն. մինչեւ օրերս Գարակեալութեանք
Ուլաշի մէջ մեծ ընտանիք մըն էին: Պա-
տմաները շատ են. միայն սա կէտը ըսենք.
Սուլթան Մուրատ գիւղապետին կը հար-
ցնէ թէ՝ Գարակեալութեան, քու հարստու-
թեանդ զաղտնիքը ի՞նչ է. Գարակեա-
լութեան՝ «Էփեմտիմ, կ'ըսէ, ախշամֆի իշի
սապահա պրագմամ»: Սուլթանը այս
խօսքը իրեն սկզբունք կ'ընէ. եւ իր Էլի-
կեմ-ըպրեզին վրայ գրել կու տայ. կը

²² Եղեռնագրասում, էջ 106-107:

²³ Եղեռնագրասում, էջ 108:

²⁴ Ասիա, Ա, էջ 367:

²⁵ Պատմութիւն Ականուր Քաղաքին Սերաս-
տիոյ..., Վենետիկ, 1911, էջ 246-247:

հասնին իրիկունն ատեն Պաղտատ. սէրաս-
քէրը քաղաքին պաշարումը առտուան ձը-
ղել կ'ուզէ. Սուլթանը լուսացուելու ա-
տեն աչքին կը զարնէ ըպրեցիմ վրայ Գա-
րակեալուրին խօսքը, անմիջապէս քաղա-
քը պաշարել կու տայ, յարձակումով կը
գրաւէ. մինչդեռ եթէ առաւօտուն թո-
ղուր, յաջողութիւն անկարելի է եղեր.
Սուլթանը՝ յաղթական կը բացազանչէ.
«Պաղտատը ես չառի, Գարակեալուրը ա-
ռաւ»: Սուլթան Մուրատ Ուլաչէն գտած
այս ընդունելութեանը համար, յատուկ
ֆէրմանով զարիի տասանորդէն ապա-
հարկ կացուցած էր զայն, եւ մինչեւ վեր-
ջին տարիներս չէին տար այդ տուրքը»²⁶:

Այս աւանդութեան ուրիշ մէկ տարբե-
րակն ալ հրատարակած է Ս. Ծոցիկեան:

«Սերաստիայէն քանի մը ժամ՝ անդին
գտնուող Ուլաչ կոչուած գիւղին մէջ հայ
գիւղապետ մը կայ եղեր Լէնկթիմուրի
ժամանակ, Ղարակեալուր Օղլու ան-
ուամբ, որ ունէր ընդարձակ արտեր, 40
ջուխտ եղ եւ 40 արօր: Լէնկթիմուր կը
լսէ այդ, եւ գիւղապետին արօրները, ո-
րոնք կը մնային արտին մէջ, փճացնել կու
տայ: Սակայն Լէնկթիմուր յաջորդ օրը
լուր կ'առնէ, թէ նոյն գիւղապետը նորէն
այլ 40 արօրներով կը գործէ արտին մէջ
իր մարդոց հետ: Լէնկթիմուր մարդը բե-
րել կու տայ իր քով եւ կը հարցնէ անոր,
թէ ո՞ւրիկէ գտաւ այդ 40 նոր արօրները:
Ղարակեալուր կը պատասխանէ. — «Ես
իրիկունն գործն առտուան չեմ թողուր.
ուստի նոր արօրներ չիկեցի գիւղերը եւ
գործը շարունակեցի առտուն»: Լէնկթի-
մուր նորէն փճացնել կու տայ այդ չին-
ուած 40 արօրները: Եւ միւս օրը դարձեալ
լուր կ'առնէ, թէ միեւնոյն մարդիկ իրենց
գործը կը շարունակեն նոր չինուած ար-
օրներով: Լէնկթիմուրի հարցապնդմա-
նը վրայ, հայ գիւղապետը, ամենայն
պաղարեամբ ու խաղաղութեամբ, նախ-
կին միեւնոյն պատասխանը կու տայ: Այն
ժամանակ, Լէնկթիմուր, այլեւս Գարա-

կեալուրին ոչ միայն վնաս չի հասցներ,
այլ նաեւ անոր խօսքերէն ու գործունե-
ութենէն դաս մը առնելով, իր ջրակուծին
վրայ քանդակել կու տայ այս բառերը.
«Իրիկունն գործն առտուան մի՛ ձգեր»: Եւ
Լէնկթիմուր, որ այնուհետեւ իր մղած
պատերազմներու ժամանակ «իրիկունն
գործը առտուան մի՛ ձգեր» սկզբունքով կը
շարժի ու միշտ յաղթութիւն կը տանի ե-
ղեր, հրամայած է Սերաստիայն կառավա-
րող իր մարդոց՝ Ուլաչ գիւղէն հարկ չառ-
նել: Աւանդապատումի այս վերջին դըր-
ուազը ոմանք կը վերագրեն թուրք սուլ-
թանի մը, որ թէեւ չէ ստուգուած»²⁷:

Այս աւանդութեան աւելի պարզ ձեւը,
որ աւելի նախնական կը թուի քան նա-
խորդները, խորհրդի մէջ պատմած է
Խառակէվուրենց Տէր Պապան:

Կը պատահի որ օր մը սուլթան Մուրատ
Սվաղ կու գայ եւ կ'իջեւանի Սվաղի Ուլաչ
գիւղը: Հոս տեղացիները վիճարանու-
թեան կը բռնուին՝ թէ թագաւորը հա-
րուստ է թէ Խառակէվուրենք: Խառակէ-
վուրենք ամէն պատիւ կու տան թագա-
ւորին եւ իր հետեւորդներուն: Թագաւո-
րը այս հայը փորձելու համար կը սկսի
զայն նեղել: Օր մը սուլթան Մուրատ կը
հրամայէ իր զինուորներուն որ դաշտ եր-
թան եւ կողոպտեն Խառակէվուրին եղ-
ներն ու գոմէշները: Հայը դաշտին գործը
վաղուան չի թողուր. իր տան մէջ մնա-
ցած մէկ եղն ալ դաշտ կը զրկէ: Զին-
ուորները զայն ալ կը տանին: Եւ երբ թա-
գաւորը այս բանը կը հարցնէ. «Ձէ՞ որ
բոլոր հարստութիւնդ տարին, ինչո՞ւ մէկ
եղը ալ զրկեցիր». հայը կը պատասխանէ.
«Տէր արքայ, այսօրուան գործը վաղուան
չեմ թողուր»: — Ծարունակութիւնը կը
նմանի նախապէս պատմուած աւանդու-
թեան. միայն թէ սուլթան Մուրատ Ու-
լաչէն Պաղտատ չի մեկնիր, այլ ուրիշ
անգամ: Ըստ պատմողին, սուլթան Մու-
րատ ոսկեզօծ ֆերման մը կու տայ որ այդ
մարդը ազատ ըլլայ որեւէ տուրքէ: Այս

ֆերմանը սուլթան Ապտիւլ Համիտ 1895ին
բռնի կ'առնէ Խառակէվուրենց ձեռքէն²⁸:

Այս պատումին մէջ ուշադրութեան ար-
ժանի կէտ մըն է որ ազարակատէրը սուլ-
թան Մուրատի այցելութենէն առաջ իսկ
Գարակեալուր կը կոչուէր:

Վերջապէս, 1909ին, Պոլիս, մատենա-
դիր Միհրան Յովհաննէսեան՝ Պ. Սեդրակ
Գարեանին կը պատմէ նոյն աւանդութիւ-
նը, եղելութիւնները վերագրելով Մու-
րատ Դ.ի եւ անոր ժամանակին. կ'աւել-
ցնէ թէ սուլթանը, դնահատելով Գարա-
կեալուրին կաղմակերպչական ոգին ու
լրջութիւնը եւ կամ նախանձէ գրգռուած,
զայն իրեն հետ Պոլիս կը տանի, իսկ զա-
ւակն ալ Խարբերդ կը զրկէ²⁹: Այս վերջին
պարագան միւս պատմողներուն անծա-
նօթ է:

Այս աւանդութիւնը, որուն հաւատա-
ցած են եւ մինչեւ այսօր կը հաւատան
Սերաստացիները եւ անոնց մօտաւոր կամ
քիչ մը հեռաւոր դրացիները, առանց
մոռնալու ուսուցիչներ, մատենագիրներ,
բժիշկներ, փաստաբաններ եւ ուրիշ «մը-
տաւորականներ», շահեկան է մէկէ աւե-
լի տեսակէտներով.

1. — Նախ կը տեսնուի թէ աւանդու-
թիւն մը, որուն յաճախ անվերապահօրէն
կը հաւատան շատերը, նոյն իսկ հարիւր
տարուան ընթացքին ինչպէս կը զարգա-
նայ, կը ճոխանայ եւ կը ծաղկազարդուի:
Լէնկթիմուրի վերագրուած, այսինքն ի-
րեւ թէ (1400ին) Սերաստիոյ գրաւումին
եւ աւերումին ատեն պատահած դէպք մը
կը փոխադրուի ժէ. դար եւ սուլթան
Մուրատ Դ.ի Պաղտատի դէմ արշաւանքին
(1638) պատմութեան հետ կը կապուի:
Ուշադրաւ է, սակայն, որ ժէ. դարուն
վերջերն իսկ, ոմանք կը շարունակէին
դէպքերը վերագրել Լէնկթիմուրի:

2. — Անգամ մը եւս կը պարզուի ծիծա-
ղելի մեծամտութիւն մը, հանդուցեալ Տօ-
նապետեանի բառերով «տիմար պարծեն-

կոտութիւն» մը: Լէնկթիմուր իր դիւրին
յաղթանակները եւ Մուրատ Դ. Պաղտա-
տի գրաւումը կը պարտին լոկ Հայու մը
իմաստուն խորհուրդին...

3. — Կը հաստատուի պատմողներուն եւ
հաւատացողներուն անհաւատալի տգի-
տութիւնը, դիւրահաւանութիւնը եւ ող-
ջամտութեան պակասը:

Անոնցմէ ոչ ոք խորհրդ է ստուգել թէ
արդեօք Լէնկթիմուր կամ Մուրատ Դ.
Ուլաչէն անցած են թէ ոչ. թէ առաջինը,
օրինակի համար Սերաստիան, եւ երկրոր-
դը Պաղտատը մէկ օրէ՞ն գրաւած են, թէ
օրերով պաշարելէ ետք: Չեն խորհիր թէ
խալամ կամ ոչ-խալամ վեհապետ մը փճա-
ցնել կու տա՞յ իր բանակը կերակրող ա-
զարակատէր մը, եւ մասնաւորաբար Մու-
րատ Դ. այդ կարգի ոճիրներ գործած է՞
թէ ոչ: Վերջապէս, ոչ ոք անգրագարձեր
է թէ ամենահարուստ ազարակատէրն
անգամ կրկնապատիկ կամ եռապատիկը
զուլթան, գոմէշ կամ եղ չի պահեր:

Աւելորդ է այս եւ ասոնց նման կէտերու
վրայ աւելի յամենուլ: Ինչ որ ստոյգ է
պատմութեանը մէջ, Գարակեալու-
րեաններուն հարկադրութիւնն է՝ պե-
տական քանի մը տուրքերէ: Այս շնորհ
հաւանաբար անոնց տրուած է օսմանեան
բանակի մը պարենաւորման եւ կամ ու-
րիշ շատ կարեւոր ծառայութեան մը ի-
րեւ վարձատրութիւն: Գարա մակդիրն
ալ, որ միայն «թխամորթ» կամ «սեւ» չի
նշանակեր այլ եւ, յաճախ, իրեւ փա-
ղաքչական ամական մը կը գործածուի,
կը նշանակէ նաեւ «քաջ», եւ ցոյց կու
տայ թէ ընտանիքին՝ այն անդամը, որ
հարկադրութեան շնորհին արժանացած
է, սուլթանի մը կամ պալատական աւա-
զանիին մէկ անդամին համակրութիւնն ու
բարեկամութիւնը շահած է: Դժբախտա-
բար, իր մատուցած իրական ծառայու-
թեան մասին ստոյգ տեղեկութիւն մը չէ
պահուած:

26 Եղեռնապատում, էջ 107-108:

27 Արեւմտահայ Աշխարհ, էջ 640-641:

28 Փիլիպպոս Գաղանճեան, «Խարբերդ եւ իր Գիւ-
ղերը» (Մշակ - Ֆրեզնոյ) 7 Յունիս 1931:

29 Անճախան հաղորդում:

Մուրատ Դ. Պաղտատի դէմ արշաւելու ատեն անցած է Սերաստիայէն, եւ դէպի հարաւ իջնելով, Ուլաշէն: Ամէն պարագայի մէջ, այս մասին տեղեկութիւն մը պահուած է: Պաղտատի արշաւանքին ուղեգիրը եղած է Գոնիա-Էրեյլի-Փայաս-Իսթանուբուլ-Հալէպ³⁰: Բայց թերեւս բանակին մէկ մասը անցած ըլլայ Ուլաշէն:

Մուրատ Դ. Ուլաշէն անցած չըլլալով, ազարակաւորով հետ իր խօսակցութիւնը յերկրածոյ է: Աւելորդ է գովածները, եւն. փճացնել տուած ըլլալու առասպելը հերքելու փորձ մը ընել:

Պաղտատ զբաւուած է քառասնորեայ պաշարումէ մը ետք եւ Պեթա-խան քաղաքը յանձնած է 24 դեկտեմբեր 1638ին:

«Իրիկուան (կամ ալսօրուան) գործը վաղուան մի՛ ձգեք» եւ «ոչ ոքի ձրի հաց մի՛ կերցնեք» սկզբունքները ժողովրդական իմաստութեան արտայայտութիւններ են, եւ մանկամտութիւն է խորհիլ թէ Լէնկթիմուր կամ Մուրատ Դ. ուրիշ մը այդ դասը առնելու պէտք կրնային ունեցած ըլլալ:

Ջրակուծին վրայ «Իրիկուան գործը վաղուան մի՛ ձգեք» սկզբունքը արձանագրել տուած ըլլալու պատմութիւնը կը գտնուի թրքական ժողովրդական պատմութեան մը մէջ, եւ շատ հաւանական է որ այդ ըլլայ Ուլաշի աւանդութեան մէկ մասին աղբիւրը:

Ըստ այս ժողովրդական պատմութեան, Մուրատ Դ. ինք է որ, երբ Գայլըճը Գուլ Մուսթաֆա անուն անպէս երիտասարդ մը Պաղտատի առջեւ իրեն կը դիմէ արտօնութիւն խնդրելու համար որ ինք ալ մասնակցի քաղաքին զբաւման, անոր առջեւ իր ջրակուծին վրայ կը գրէ այդ խօսքը³¹:

Պաղտատէն վերադարձին ալ, Մուրատ

Դ. անցած է Տիարպաքէն, Մալաթիայէն եւ 5 Մայիս 1639ին Սերաստիոյ մօտ Ըլլե-ճայի մէջ Էրզրումի կուսակալ Քենան փաշա իրեն ներկայացուցած է 15 դուլիս եւ երեք Գրզըլսաշ, յայտնելով միանգամայն թէ Կարսէն անդին Իւչ Քիլիսէի շրջակայքը աւարի տուած է³²: Վերադարձին ալ Ուլաշ հանդիպած ըլլալուն մասին տեղեկութիւն չկայ:

Աւանդութեան Լէնկթիմուրի վերադրումը ցոյց կու տայ թէ անոր ծագումը շատ աւելի հին է քան Մուրատ Դ. (Ժէ. դար), եւ անոր ծագումը պէտք է փնտռել ԺԱ. դարուն պատահած դէպքի մը մէջ:

Բիւզանդիոնի Վասիլ Բ. կայսրը (976-1025), Տայքի Դաւիթ կիւրապաղատին (1000) ժառանգութեան տիրելէ ետք, դէպի Կ. Պոլիս վերադարձին, անգամ մը եւս անցաւ Կապադովկիայէն: Բիւզանդացի պատմադիրները կը պատմեն թէ Խարսիոնոն ամբողջին մօտերը շքեղ ընդունելութիւն մը դտաւ մագիստրոս Եւթաթիոս Մալէինոսին (Մալէացի) կողմէ, որ կը պատկանէր Կապադովկիոյ մեծ ընտանիքներէն մէկուն եւ խնամի էր Փոկասնորու նշանաւոր ընտանիքին: Եւթաթիոս 987ին իր ընակալայրը տրամադրած էր այն զօրավարներուն որոնք հաւաքուած էին ապստամբ Վար(աս) Փոկասը կայսր հռչակելու համար: Այս մեծահարուստ եւ պերճաւիայ իշխանը, որ երկար տեսնէ ի վեր ներման արժանացած էր, կ'ըսեն քրոնիկագիրները, ոչ միայն հիւրասիրեց Վասիլ կայսրը, այլ եւ ամբողջ բանակին պարէն հայթայթեց առատօրէն: Վասիլ, իր շնորհակալութիւնը յայտնելու պատրուակով, զայն Պոլիս տարաւ եւ մինչեւ մահը հոն պահեց, առանց արտօնելու որ վերադառնայ³³:

Այս իրական պատմութեան մէջ կը գտ-

30 Naima, III, p. 326-362.
31 Köprülüze Mehmed Fuad, Kayıkcı kul Mustafa ve Genc Osman hikâyesi. İstanbul, 1930, p. 15 & 28.
32 Naima, III, p. 419.
33 Cedrenos, P. G., 122, col. 180-181. Cf.

Schlumberger, L'Épopée Byzantine, II, p. 198; C. Neumann, La Situation mondiale de l'Empire byzantin, p. 62; Diehl & Marçais, Le Monde oriental de 395 à 1081, p. 526; Bréhier, Vie et Mort de Byzance, p. 218.

նուին Ուլաշի հայ ազարակաւորին վերաբերեալ աւանդութեան զանազան պատմներուն բոլոր հիմնական տարրերը, բաց ի ջրակուծին դրուագէն: Հայ ազարակաւորն ալ «փարթամ եւ հին ընտանիք» է մը սերած է ինչպէս Եւթաթիոս. մեծ ազարակաւոր մըն է, եւ վեհապետը հիւրընկալելով՝ անոր բանակին պարէն կը հայթայթէ ինչպէս Եւթաթիոս. վեհապետը զայն միասին Պոլիս կը տանի՝ ինչպէս հայ ազարակաւորը եւ Եւթաթիոս կը տարուն:

Միհրան Յովհաննէսեանի պատումին մէջ կայ նաեւ ազարակաւորով զաւակին Խարբերդ փոխադրութիւնը, որ չկայ Եւթաթիոսի պատմութեան մէջ: Խարբերդի մէջ կ'ապրէր Խառակէվուրենց Տէր Պապան, իննըսուն տարեկան ծերունի մը: Թերեւս այս անձին Խարբերդի մէջ գոյութիւնն է որ ենթադրել տուած է Գաւրակաւուրին որդւոյն Խարբերդ փոխադրութիւնը: Թերեւս այդ ընտանիքին անդամը ինքնաբերաբար հոն հաստատուած ըլլայ:

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ

1961-63

ՅԻՍՈՒՍԻ ՎԱՐՇԱՄԱԿԸ ԵՒ ԿՏԱԽՆԵՐՈՒՆ ԴԻՐՔԸ ՅԱՐՈՒԹԵՆԷՆ ՎԵՐՉ

(Շար. տե'ս «Բագմ.» 1961, ք. 6-8, էջ 141)

Երբ Սիմոն Պետրոս գերեզմանին ներսը կը մտնէ, կը տեսնէ որ հոն կային կրտսերներ. իսկ վարչամակը միւս կողմէն երկուն հետ չկար: Այս կալ բայը կ'արժէ որ քննութեան մը ենթարկուէր, նոյնիսկ մեր լեզուին մէջ, իր զանազան իմաստներուն պատճառով:

1939ին, ամերիկացի Յիսուսեան Հայր մը, Mc Clellan կարծիք յայտնած էր որ մը, բայը հոս կը նշանակէր հանդստեան այդ բայը հոս կը կարգաւորեալ կամ դիւր մը, առանց կարգաւորեալ կամ խառնակ վիճակ մը ցոյց տալու, ու կը հետեւցնէր թէ մեռեալին հաղուստները ուրբաթ երեկոյեան դիրքով մնացած էին, միայն պարպուած եւ տափակ, իրենց ծանրութեան տակ ինկած, եւ ոչ մէկ մարմին այլ եւս զանոնք վեր չէր բռնէր¹:

Իսկ 1933-34ին, Dr. Willam, իր հրատարակած Յիսուսի վարքին մէջ նման բան մը կ'ենթադրէր: Յիսուսի մարմինը յանկարծ թափանցող դառնալով թողած էր որ կրտսերները ամբողջութեամբ կծկուէին:

Սակայն, 1949ին, նոյն հեղինակը կրկին կը վերադառնար այս խնդրին ու կը խորանար: Իր գաղափարով՝ փառաւորեալ մարմինը անցած էր զինք պատող կտաւներուն մէջէն, որոնք իրենց տեղը կը բռնած՝ այսինքն տափակ մնացեր էին: Մինչդեռ, զարձեալ իր կարծիքով, վարչամակը յատուկ առանձնաշնորհութիւն կը վայելէ:

Դիպումածով է արդեօք որ Յովհաննէս այս կալ բայը կը դործածէ Կանայի հարսանիքի եւ Չարչարանքի մէջ. երկու պարագաներուն ալ խնդրը հեղուկի ամաններու մասին է, որոնք հանդիստ իրենց տեղը կեցած էին. «անդ էին (կային) թափուկ կճեայք վեց» (Յովհ. Բ. 6), եւ «անդ կայր աման ինչ լի քացախով» (Յովհ. Ժ. 29):

Իսկ վարչամակը ինչպէս կ'ըլլայ որ

1 Catholic Biblical Quarterly, հտ. Ա. Թ. 3
Յունիս 1939, էջ 253-5: